

ՀԱՅՐԵՆԱՍԵՐ ԵՎ ԸԱՂԱՔԱԿԵՏ ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ
«ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՈՒՄ»

Բանասիր. գիտ. դոկտոր ՄԱՐԻ ԶԱՔԱՐՅԱՆ

Երկրի քաղաքական ծանր իրավիճակի շուրջ Ավ. Իսահակյանի խորհրդարանությունները «Հիշատակարանում» ներկա են առաջին իսկ գրառումներից սկսած, որոնք տարիների, տասնամյակների հետ, ազգի օրհասական ճակատագրով պայմանավորված իրողություններով անընդհատ մտահոգել են գրողին, պարբերաբար քննարկման նյութ դարձել օրագրում: Գրողի մտորումները ծավալվում են ոչ միայն քաղաքական դեպքերի անմիջական գնահատման ու արժևորման հենքով, այլև քննվում հայրենիքի ճակատագրի, հայ ժողովրդի դարավոր անցյալի պատմության դիալեկտիկ զարգացման ընդհանուր շղթայում: Այս ամենով հանդերձ՝ Իսահակյանի քաղաքական դիմանկարի վրձնումը միայն օրագրով միակողմանի է, քանի որ Հայաստանի քաղաքական անցուղարձի մասին հեղինակի մտորումների ամբողջացման համար հարկ է անդրադառնալ գրողի արխիվային, դեռևս չհրատարակված նյութերին, և Իսահակյանի՝ դաշնակցական ընկերներին ու մտերիմներին ուղղված նամակներին:

Հայրենիքի քաղաքական իրադարձությունների մասին օրագրի առաջին գրառումները վերաբերում են 1895—96 թթ. սուլթանհամիդյան արյունոտ ջարդերին, որոնց ղոհ գնաց ավելի քան 300 հազար հայ: Կոտորածները սուլթանների ավանդական քաղաքականությունն են կազմում «...և կրկնվում են... ամեն տասը տարին մի անգամ... բնության օրենքի կանոնավորությամբ...»¹, իսկ քաղաքական հարցը Սան Ստեֆանոյից Բեռլին տեղափոխելն արդեն իսկ նշանակում էր, որ այն դառնում էր եվրոպական դիվանագիտության հիմնահարցը: 1880-ական թթ. բուլղարների ազատագրությունից հետո հայ քաղաքական կյանքում իշխող կարծիքը հետևյալն էր. «...սեփական ուժերի գիտակցումը, հետո միայն դիվանագիտությանն ապավինելը»²: Իսահակյանի՝ ազգային-քաղաքական կյանքին վերաբերող առաջին տեղեկությունները թվագրված են 1894 «նոյեմբերի 19», ուր նա ի մի է բերում արևմտահայության ազատագրման խնդրի սեփական պատկերացումները: Մինչև Սասունի կոտորածները Իսահակյանն այն կարծիքին էր, որ հայ ժողովուրդը ի զորու է ձեռք բերել անկախություն՝ ապավինելով սեփական ուժին, սակայն այդ արյունոտ իրադարձությունները եկան ապացուցելու հակառակը: Եվ գրողն այդ օգնությունն ակնկալում էր ռուսական զենքի հաղթանակից: Գրառման մեջ էլ ներկայանում է կյանքը հայրենիքի ազատության ղոհասեղանին նվիրաբերած հայրենիքի գինվոր Ավ. Իսահակյանը. «...Նս էլ...արյուն կթափեմ... և իմ հայրենիքը կփրկեմ կրակից ու արյունից ու սովից»³: 1895 թ. «Հունվարի 14-ի» օրագրային գրառումը նույնպես հայ-թուրք անմիջական հարաբերությունների արդյունք է: Ժողովրդի դժնի կացությունը սեփական վիշտ համարող բանաստեղծը, սթափ գիտակցելով հանդերձ բռնակալի ուժի գերա-

1 Քր. Միքայելյան. Ամբոխային արամագրություն. Ժնև, 1906, էջ 5:

2 Զ. Կիրակոսյան. Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.). Երևան, 1980, էջ 191:

3 Ավ. Իսահակյան. Հիշատակարան. Երևան, 1977, էջ 94 (այսուհետև՝ Հ, էջերը կնշվեն կից):

զանցությունը, պայքարի է կոչում նրան. «Ժողովուրդ... ես ձեզ մեղմություն ու հգորություն չեմ քարոզում, ևս չեմ ուզում, որ ոչխարներ լինեք, ես ձեզ քարոզում եմ հերոսություն» (Հ, 158): Հերոսության այս մտայնությունն է իշխում «Գողթան քնարը, որ ազատության...» պոեմում, 1900-ական թթ. սկզբների պարբերական մամուլում («Գեղարվեստ», «Դրոշակ», «Գարուն», «Մուրճ», «Տարազ» և այլն), «Հայ գուսան» ստորագրությամբ տպագրված հայրենասիրական բանաստեղծություններում, «Մասսա Մանուկ» քիպասքում: Այս տարիներին էլ գրողը ժողովրդի գոյատևման նախապայմանն առնչում է հայ ժողովրդի խնչպես ազնիվ, սրբազան պայքարին, այնպես էլ սրդար վաստակի պահպանմանը. «Սուրն ու գերանդին, գութանն ու վահանը— ահա սրանք պիտի լինեն միշտ, միշտ մեր ձեռքին» (Հ, 174): Ազգի հարատևման մասին գրողի խորհրդածությունները նույն հարազատությանը են ներկայանում նաև «Հորս գութանը» վավերագրական հենքով շարագրված պատմվածքում: 1903 «Փետրվարի 13, Բաքու» գրառումից հետո «Հիշատակարանում» հայրենիքի քաղաքական ձևակառուցման վերաբերյալ որևէ գրառում չկա ոչ 1904, ոչ էլ 1905 թթ.: Դժվար է պարզել՝ դրանք կատարվել են արդյոք, թե՛ ոչ, սակայն այդ տարիների գաղափարական-ստեղծագործական հասունությունը ներկայանում է հատկապես բանաստեղծություններում: այս տարիներին է նա գրում նշանավոր «Ազատության զանգը»:

1900-ական թթ. սկզբներից հրահրվում են ազգամիջյան ընդհարումներ և թափար խաժամուժը գինում հայերի դեմ: Կովկասում սկիզբ առած արյունոտ ընդհարումները հատկապես դժան և արյունահեղ էին Բաքվում, 1905 թ. փետրվարին: Ավ. Իսահակյանը այդ տարիներին լայն գործունեություն⁴ է ծավալում, լինում Հայաստանի տարբեր շրջաններում, հեռավոր գյուղերում՝ ժողովրդին դաշնակցական կուսակցության գաղափարներին ծանոթացնելու, իսկ Բաքվում և Թիֆլիսում՝ զենք և դրամ հայթայթելու նպատակով: 1913 թ. գրառումներում Եվրոպայի քաղաքական աշխուժացող կյանքից անհանգստացած՝ հայրենիքի ճակատագրի համար ծանր տագնապ ապրող բանաստեղծը, ասես նախազգալով իր երկրին ու ժողովրդին սպառնացող վտանգը, սնդրադառնում է եվրոպական երկրների բարոյական նկարագրին. «...Եվրոպան անբարոյական է... մարդասիրական կողմից Եվրոպան միայն գիտե իր սանտիմը, իր շահը. նյութապաշտ է. էպոխտ, քարասիրտ, շոր ու անզգա, միայն ունի քաղաքավարական կեղծ...» (Հ, 308): 1915 թ. օրագրում Իսահակյանը փորքածավալ գրառում է կատարել, որը բաժանվում է երկու մասի. «Ապրիլի 2» և «Օգոստոս, Բեռլին»: Հայրենիքի հանդեսը անափ սերը ցավագնորեն է գլուխ բարձրացնում բանաստեղծի հոգում հատկապես օտար ափերին գտնվելու տարիներին: Այս առումով էլ հիշարժան է այս առաջին՝ «Ապրիլի 2» գրառումը, որը ողողված է հայրենիքի հանդեպ նրա ջերմ սիրով ու քնարական կարոտով: Կարոտի այս հուղապրումները տարիներ անց ներկայանում են «Հայրենի ծուխը» (1926 թ.) բանաստեղծության մեջ:

1915 թ. «Օգոստոս, Բեռլին» գրառման առաջին տողը, Արևմտյան Հայաստանի ողբերգական անցքերով պայմանավորված, ծառայում է արդեն առանց ազգային պատկանելության, ընդհանրապես մարդ արարածի գազանային էության դեմ. «Իմ և աշխարհի մեջ չկա ներդաշնակություն: Մի քացի, մի հարված տամ և գահավիժեմ երկրագունդը անդունդի մեջ՝ իր մորալով, օրենքներով...» (Հ, 314): Իսահակյան մարդու հոգևոր աշխարհը այստեղ ներկայացված է սիմվոլներով, և նման գրառումները առավել կատարյալ ձևով առկա են օրագրի 1930-ական թթ. խորհրդային կյանքի քաղաքական մթնոլորտը ներկայացնելիս: Եղեռնի գրառման առաջին արձագանքները իրենց ողբերգությամբ ահավրալից են: Օտարության մեջ բանաստեղծը հայրենիքի ողբերգության մասին նամակ է ստանում՝ մի «սպիտակ չգրված թուղթ, որ

⁴ Ավ. Իսահակյանի այս տարիների քաղաքական գործունեության մասին տե՛ս Ավիկ Իսահակյան. Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը. Երևան, 1984, էջ 24:

մեկնելի սավանի պես փոված է» (Հ, 314): Դա հայ ժողովրդի, արևմտահայ մտավորականության ընտրանու՝ իր դրչակից ընկերների օրհասն է գուժում, որոնք զո՞ գարձան երիտթուրքերի հրեշավոր արարքին՝ Դ. Վարուժան, Գ. Զոհրապ, Սիամանթո, Խ. Սևակ, Խ. Զարդարյան, Երուխան, Թլկատինցի, Հրանդ, Արտ. Հարությունյան, Գ. Բարսեղյան, Տ. Չյուկյուրյան, Ս. Բյուրատ և ուրիշներ: Արևմտահայ հայրենիքը Իսահակյանը աշնան ու ձմռան քամու տեսքով է ներկայացնում. քամուց հալածված շոր տերևների, կմախքացած դանգերի և կրճատացող ատամների զուգահեռը առավել առարկապական է դարձնում ասելիքը. «Աշուն է, ցուրտ, դուրսը քամին հալածում է շոր տերևները, որոնք կմախքացած գանգերի նման, ակռաները իրար չըխկ-չըխկացնելով քշում են դնում, ո՞ւր—իրենք էլ չգիտեն ուր... անթաղ դիակներ... Գերեզմաններ, հրդեհներ, և ծովերի մեջ, ջրհորների և գետերի մեջ...» (Հ, 314): Սա արշունոտ հայրենիքի դավակի ողբն է՝ գալարվող, հոշոտվող ցավի ողբերգական հնչերանգով: Համոզված, որ ցեղասպանության հեղինակները աշխարհի հզորներն են և նրանց հովանավորները, Իսահակյանը նույնակերպ քնահաստություններ է տալիս Համիդին, Թալեաթին, էնվերին, Վիլհելմին, Դուրյա փաշային, Հորվեգին, Բրիանին և թուրք խուժանին: Օրագրում գրողը ցեղասպանության ողբերգական անցքերի ուղղակի վերլուծություն չի կատարում, այլ՝ խորհրդանիշերով, սեփական հոգեկան կացության նկարագրությամբ է այդ ամենը ուրվագծում: Այս զարհուրելի անցքերն էլ նրան ինքնասպանության են մղում. «Դուք կանչում եք ինձ իմ ընկերներ, իմ մորթված, խողխողված քույրեր, եղբայրներ, մանուկներ... գալիս եմ, գալիս եմ... Եվ մեկը բռնեց դաստակս. նայում եմ ետ—մի ծերունի. —Ի՞նչ ես անում, դու փոքրոգի...» (Հ, 315): Ծերունու կերպարը օրագրում զուտ խորհրդանշական իմաստ ունի, թերևս նաև երևակայության արդյունք է. այս է հավաստում տեքստի հաջորդ պարբերությունը, երբ տիեզերական մատչանում տարաբախտ ժողովրդի դավակին նա մատնացույց է անում անհիշելի ժամանակներից ճամփա ելած ժողովուրդների պատմությունը: Հոգևոր ծանրագույն պահերին օրագրի հեղինակը՝ Իսահակյան մարդը, երկատված հոգեվիճակներով է ներկայանում: Այդպիսին է նաև այս գրառումը, ուր իր ժողովրդի ողբերգությունից ցնցված՝ գրուցում է երևակայական ծերունու հետ: Թվում է՝ այն գրողի մոտ պատահական չէ և միաժամանակ հետևյալ մեկնությունն է ենթադրում. մի դեպքում պատմության թոհուրեթոհ անցած, բոլոր վայրագ ու բարբարոս ցեղերի ասպատակությունները տեսած ու դրանց զիմակայած հայ ժողովուրդն է, մյուսում՝ բարու և շարի, արարման ու փրկման հազարամյա հոգեբանությունը մարմնավորող համաշխարհային, համամարդկային խիղճը, որն ասես մխիթարում է նրան՝ դրանով իսկ փորձելով քավել մարդկության կատարած արյունոտ մեղքը: Ծերունին՝ տիեզերական մագաղաթի մեջ հեղինակին ցույց է տալիս իր ժողովրդի ճակատագիրը. «Տեսնում եմ—Արարատյան հրկիրը, հայ ժողովուրդը ումեղ, պայծառ, հզոր. ստեղծում է, պայքարում և ապրում... Անասյատներից մոխիրների պես արշավում են կատաղած ձիերի վրա, վայրենի աղմուկներով. սրածություն, ափեր, արյուն, հրդեհ, քանդում են, մորթում. Արարիան. ջարդեր. նախիջևանի նախարարների կիզումը, մոնղոլներ, Չինգիզխան, Ալիասլան, Իսմայիլ, Լենկ-Քեմուր, Շահ-Աբուս, Աղա-Մահ-մադ...» (Հ, 315): Իսահակյան մտածողը համոզված է, որ դա միայն թվով փոքր իր ժողովրդի ողբերգությունը չէ, այլ համայն մարդկությանը, որը,

* Վայրառ ու բարբարոս ցեղերի ասպատակություններին զիմակայած հայ ժողովուրդը ծերունու կերպարանքով ներկա է նաև վերջին օրերի Չարենցի՝ հայոց պատմությանը նվիրված անավարտ պոեմում: Դարերի սարսափի, արյան ու ավերի միջով անցած այդ ծերունին, որ կարծես Մեռյալ է անմահ-նաիրյան քթով...» անշուտպ նրթով, հանդարտ հյուսում է իր օրերի վեպը՝ որպես վկան իր ժողովրդի գմնի ու արյունոտ ճանապարհի. Ե. Չարենցի. Անտիպ և չճավաքված երկեր. Երևան, 1983, էջ 369:

սիրտը «քար», սատար չի լինում նրան: Հենց այդ պատճառով էլ չի հաղթահարվում շարի հոգեբանությունը, որը, ըստ էության, մարդկության բարոյական շահանքների անկում է նշանակում:

Երկրի ու ժողովրդի անցած ճանապարհին ուղղված պատմական հետադարձ հայացքը ստիպում է Իսահակյանին շարի ու բարու պայքարի ընդհանուր մեկնություններից անցնելու նրանց հակասությունների ու պայքարի գաղափարին: Եվ այստեղ էլ նա, կամա-ակամա, ստիպված էր համաձայնվել ծերունու հետ՝ շարին վերագրելով սպառողի, ավերողի, իսկ բարու մեջ տեսնելով արարողի, ստեղծողի հոգեբանությունը: «Թյուրքն ասեց—եղեոն ու ոճիր: Հալը—հատուցում, գազանի զսպումն, պատիժ և ստեղծում. աշխատանք, ստեղծել, պայքար, մարտ, ոգևորում, հարվածել, և առաջ գնալ, ստեղծել...» (Հ, 316): Հալը՝ աշխարհի ծանրագույն ճակատագիր ունեցող փոքրաթիվ ժողովուրդներից մեկը՝ բարբարոս թշնամիների գերազանց ուժի դեմ անընդհատ ոտքի է ելել, պայքարել ու մաքանել և, թեկուզ արնաթաթախ, բաց ապրել է ու արարել: Սակայն ավերի ու բռնության հետամուտ շարը մարմնավորող թշնամին նորից է քանդել, մահ ու արյուն սփռել, իսկ ժողովրդի սերունդները, ազատության վե՛՛՛՛՛՛՛՛ ձգտումներով տոգորված, նորից են պայքարել՝ իրողություն դարձնելու համար իրենց և նախնիների դարավոր երազները: Եվ այսպես, ժողովրդի դարավոր երթը ձգվել է դեպի լույս ու արարում, մինչդեռ վերջին հարյուրամյակներում նրա երկրի մեծ մասին տեր դարձած, հայությանը բնաջնջած թուրք վաչկատուն ցեղերը լեկկեմուրյան թալան են ձեռնարկել նաև հոգևոր-մշակութային արժեքների հանդեպ, ընդհուպ մինչև XX դարի վերջը: 1905 թ. գրված «Մեր ճակատագիրը» բանաստեղծության օրինակով հեղինակը հավաստում է. «...Մեր ժողովուրդը... խաչված Քրիստոս»⁶: Իսահակյանի խորհրդածությունները ծավալվում են «հայ ժողովուրդ—Քրիստոսի ճակատագիր» դուգահեռով: Իր ազգի անլուր լլկանքները համեմատելով Քրիստոսի կրած շարշարանքների հետ՝ գրողը միաժամանակ մտահոգված էր աշխարհի հնազույն ժողովուրդներից մեկի աղգային արժեքների, մշակույթի, հոգևոր մասունքների պահպանության հարցով: Ինչպես Քրիստոսի պատմուճանը բաժան-բաժան արվեց, այնպես էլ աշխարհի հզորները բաժանեցին Հայաստան երկիրը, յուրացրին դարերի տրանսբով ստեղծված ազգային հոգևոր գանձերը: Հայաստանի ազատագրման հարցում Եվրոպայի խաղացած բացասական գերը ժամանակին հստակացել էր Գամառ-Քաթիպան և նախազգուշացրել հայերին, որ իրենց հույսը որևէ տեղության անշահախնդիր օգնության վրա չդնեն: Այս աղերսով Իսահակյանը գրում է.

Ասա՛ մեզ, Եվրոպ, ո՛ւր ես շառագում
Ձեռներդ երկած հայի առյուճով.
Դու հռչակեցիք Մուր Հայաստանը
Այժմ ո՛ւր ես փախում արևառ ձեռներով⁷:

Բարու և լույսի հաղթանակի նպատակով էլ Իսահակյանը հիմնավորում է իր ազգի հետագա գոյատևման գրավականը: Հայրենապաշտ գրողը, դարերի կենսափորձով իմաստնացած, ժողովրդի զավակներին ու սերունդներին է հղում իր պատգամը, որը շարենցյան «Պատգամի» ուժն ունի հատկապես այժմ՝ 1990-ական թթ. վերջերին՝ անկախ Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար՝ «միաբանություն, կամք, համերաշխություն, և մեկը կդառնա հազար, հազարը՝ բյուր, բյուրը՝ բյուրավորներ» (Հ, 316): 1916 թ. «Փետրվարի 18»-ի գրառման մեջ արդեն գրողը հայության վիշտն ու տառապանքը համամարդկայինի աստիճանի է բարձրացնում, ինչպես Քրիստոսը

⁶ Զարենյի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Իսահակյանի արխիվ, № 564—565—II, էջ 6:
⁷ Ա. վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Հայրենի երգեր. Երևան, 1990, էջ 251 (այսուհետև՝ ՀԵ):

մարդկության մեղքը իր վրա վերցրած Կողմից բարձրացավ և նահատակվելով աստվածացվեց, այնպես էլ միլիոնակեց հայության թափած արյունը, պետք է բարոյապես ինքնամաքրման մղի մարդկանց: Մինչև աշխարհի հզորները չգիտակցեն այս՝ հայ ժողովրդի ցեղասպանությունը ընդունելով, նրանք դատապարտված կլինեն հոգևոր-բարոյական անկման: Նույնացնելով հայ ժողովրդի և Քրիստոսի ճակատագրերը, քրիստոնյա աշխարհի կողմից խաբված իր տարաբախտ ժողովրդի ճակատագրով էլ Իսահակյանն ասես փորձություն է ենթարկում աշխարհի խիղճը, գոթք: Բարոյականությունն ու մարդասիրությունն ընդհանրապես Կողմի կարծիքով, եթե աշխարհի ժողովուրդները հասու լինեն հայերի կրած տառապանքին, դրանով իսկ կապահովագրեն աշխարհը հետագա արչունահղությունից: Իսահակյան մտածողի իրավացիության վկայությունն էր հրեաների ջարդը Նյու-Կորթ համաշխարհային պատերազմի տարիներին:

Հայրենիքի քաղաքական ճակատագիրը օրագրում պատմափիլիսոփայական քննության է ներկայանում, և այս առումով հատկանշական է 1916 թ. սեպտեմբերի 21-ի գրառումը, ուր զրոյր տրձանաբրում է. «Հայոց բոլոր արյունի մեղքը եվրոպացիների խղճի վրա է ծանրացած» (2, 318): Նրանք Թուրքիայում կապիտալ ներդրումներ են կատարում՝ ապահովելով իրենց նյութական շահը, նորագույն դինք մատակարարում թուրքերին՝ փորձարկումների համար. «Թո՛ղ կտորեթ թուրքը, եթե այդ նրան պետք է, մանավանդ, եթե դրա համար մեզ կոնցեսիա է տալիս. ուրեմն թո՛ղ ջնջե, մեզ ի՞նչ. մենք մեր շահը, փողն ենք ուզում...: Եվ այդ նվրոպան իրան հաշվում է քաղաքակրթի, լուսավոր քրիստոնյա... նա առաջադիմել է գաղանության մեջ կատարյալ գենքերով (Կրուպի) սպանել, մորթել, դավել, խաբել... այս պատերազմը... ցուց տվեց, որ բոլորն էլ բորենիներ են, խաբողներ, փոքր ազգերի դահիճներ և ամենքի դրոշակը հյուսված է կեղծիքներից, խոստումներից, խորամանկություններից և մեծ գաղափարների (եղբայրություն, քաղաքակրթություն, ազգերի սղատություն, իրավունք, արդարություն) անուններից... Կեղծ, դավոդ-խալոդ դրոշակներ՝ փոքր ազգերին առաջ նետող և կոտորել տվող...» (2, 318—319): Իր ժողովրդի հանդեպ աշխարհի ոճրագործների կատարած ցեղասպանությունը համար էլ գրողը վրեժի հուր էր վառում ոչ միայն յուրաքանչյուր հայի, այլև՝ սերունդների սրտում:

Օրագրում ժողովրդի նախճիրին ականատես հայրենասեր զավակի ողբն է՝ հեթանոս մտայնության ոճական շնչի հարադատությամբ. «Ծս պիտի նստիմ Մասիսի ստորոտին, դլխիս մոխիր ցանեմ և լամ, լամ՝ նգովելով ամբողջ աշխարհը... բարեկամ ու թշնամի, և ամեն հայի սրտում վառելով վրեժի օձ ու թուն» (2, 319): Հոշոտող դավի ու աղեխալոջ տառապանքի զգացումը կրկնապատկում է իր ժողովրդի կողքին չլինելու բանաստեղծի մեղավորության դիտակցումը: «Հիշատակարանում» ամփոփված են 1915—1923 թթ. հայոց ցեղասպանության և հայրենիքի հետագա սղետալի դեպքերի մասին հեղինակի մտորումները, որոնք անեծք էին ոչ միայն թուրք բարբարոսներին, այլև եվրոպական տերություններին, որոնց սուտ խոստումներին հավատարիմ՝ հայ ժողովուրդը ոտքի ելավ իր արդարացի պահանջով՝ եվրոպացիների մարդասիրությանն ու աջակցությանը վստահած, և քաղաքական իրադրության այս սխալ կողմնորոշումն էր, ոտ հայ ազգալին-ազատագրական պայքարը, տրամաբանորեն պայմանավորված 1915 թ. ապրիլի 24-ից սկսվող ողբերգական իրադարձություններով, հաջողություն չունեցավ և շարունակվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև՝ Արևելյան:

Ազգալին ողբերգության մեջ մեղավոր ճանաչելով աշխարհի տերերին՝ Իսահակյանը մեղադրում է ընդհանրապես ՄԱՐԴՈՒՆ՝ ստեղծած օրենքների, ուսման և գաղափարների, հոկերեստիություն և դիմակի համար. «Այսուհետև անհնար է հավատալ մարդուն, մորալին, բարոյականության, խղճի, խղճմտանքի... Մարդը կատարելագործված գաղան է, ոչինչ ավելի և ոչինչ պակաս...» (2, 319), խորապես համահունչ թոմանյանական «Բ. հետև է մինչև Մարդը իր ճամփան» մտորումներին: Անդրադառնալով եվրոպական

կեղծ դեմոկրատիզմին՝ Խոսհակյանը «...չաւուակաբանում» նպատակ ունի ր վերջնականապես հօդս ցնդեցնել քրիստոնյա բաղաբակիրթ երկրների օգնության մասին ժողովրդի հոգու խորքում փայփայած սին առասպելը. «Եվրոպա... հումանիզմ, քրիստոնեություն, լուսավորություն, կուլտուրա... Սուտ խոսքեր... նա երեսուն արծաթով ծախում է մի ամբողջ ժողովրդի գոյությունը, հայրենիքը, մի ժողովրդի, որին նա հույս էր տվել, խոստումներ և հիմն դավաճանում է՝ հանձնելով «...բոլոր դաժան ժողովուրդների մեջ ամենադաժանին՝ գաղանին...»⁸: Հետագարձ հայացքով ի մի բերելով իր ժողովրդի պատմական անցյալը՝ գրողը դառն կսկիծով շեշտում է, որ Լենկ-Թեմուրի, Շահ-Աբասի և սուլթան Համիդի կատարած ավերները 1915 թ. եղևոնի համեմատությամբ «...չնչին, աննշան համեմատություններ են ներկայացնում այս վերջին, բոլոր ազգերի, բոլոր դարերում եղած սարսափներից գերազանց աղետի հանդեպ... Աշխարհի մեջ ամենասարսափելին, ամենահավոր, ամենասահունիկն ու ամենամեծը բաժին ընկավ հային. նա շունի իր վիճակակիցը այդ սարսափներից այն կողմն էլ սարսափ չկա, դա սահման է...» (Հ, 320—21): Իր ժողովրդի անցյալին, նրա հեթանոս արի ու հերոսական պատմությունը քաջատեղյակ Խոսհակյանը հայերի քաղաքական դժբախտությունը որոնում է նախնիների հոգեբանության մեջ. «Քեզ ի՞նչ պատահեց, իմ անմահ ժողովուրդ... Ինչո՞ւ թուլացավ քո կորովը և աղեղդ ընդարմացավ, արդյոք չէ՞ մի, որ դու դավաճանեցիր քո հին, բարի, արի աստվածներին և նրանք էլ լքեցին քեզ, իմ հեք, իմ աղքատ ու ծեծված ժողովուրդ...» (Հ, 321):

Խոսհակյանի կարծիքով, ի տարբերություն քրիստոնեության, հեթանոսությունը որոշակի ընդվզման, ըմբոստության ու պայքարի մտայնությամբ ու հոգեբանությամբ էր դաստիարակում սերունդներին, մինչդեռ Քրիստոսի բարության գաղափարը, այն էլ ժողովրդի կողմից ճիշտ շրջակաված, թերևս պատճառ դարձավ և որոշակի հիմքեր ստեղծեց, որ շարի և բարու, խավարի և լույսի համադրության ժամանակ նա կողմնորոշվի դեպի վերջինը, չպատկերացնելով հանդերձ, որ դրանք կարող են գոյություն ունենալ սոսկ իրենց հակադրություններում: Արդյունքում էլ ահա հայերի ճակատագիրը. «Այդ օրերում, ժամանակներում նշանաբանն էր—ամեն բան եղիր, հայ մի եղիր...»⁹: Այս մտորումներում էլ Խոսհակյանը կասկածի տակ է առնում Աստծու գոյությունն ընդհանրապես և հանգում հետևյալ եզրակացության. շարի և բարու պայքարում թագավորում է սատանան. «Աշխարհը՝ քար, մարդիկ՝ օտար, թուրքը՝ գազան, մանկամորթ, Եվրոպան շահամուլ... իսկ հայերը՝ հավիտենական զոհեր... Եվ Աստված էլ չկա, միայն սատանան է, որ իշխում է...» (Հ, 319—320):

Հալ ժողովրդի հողին տեր դառնալուց, հոգևոր-մշակութային գանձերը թալանելուց հետո էլ թշնամին որոշել է Ֆիդիկապես ոչնչացնել՝ պատմության միջից ջնջելով նրա անունն ընդհանրապես՝ այս է Խոսհակյանի 1917 թ. հունիսյան գրառման բովանդակությունը: Սակայն իր ժողովրդի դարավոր փորձություններին ու մաքառումներին, կենսունակ ու կենսասեր, արարող ոգուն, հարատևման դարավոր փիլիսոփայությանը ծանոթ գրողը վավերացնում է. «Դու չե՛ս մեռել, ... դու ինքդ սնմահությունն ես և հավերժական գաղափարը... Իմ ժողովուրդ, գոտի՛դ կապիր և հավատարի՛մ մնա քեզ...» (Հ, 323—324):

Գրառման երկրորդ մասը հայ ոգու անմահության ձոններգն է, լեզվաոճական ատաղձով, ցեղապաշտ-արիապաշտ տրամադրությամբ հոգեհարազատ Դ. Նժդեհի ցեղակրոն ուխտի գաղափարախոսությունը, որը հայության ազատագրությունն առնչում էր աղգային ոգու անեղծ ակունքներին: Աշխարհում հալ ապրելու համար, մեծ դորավարի կարծիքով, գոյություն ունի միայն մի ուժ՝ «Ներցեղային բարոյականը», որը ցեղի ոգու տարերբը դարձնում է

⁸ ԳԱԹ. Խոսհակյանի արխիվ, № 423—II, էջ 3:
⁹ Նույն տեղում, № 752—756—II, էջ 7:

հորը Երբ տվյալ ճակատամարտում ցեղը չի բերում իր մասնակցությունը, պարտությունը դառնում է անխուսափելի: Ժողովուրդը «...հայ մարզու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական»¹⁰: Մեծ զորավարի այս մտայնությունը բացառիկ բանաստեղծական-քնարական ձևով ներկայանում է գրողի օրագրում. «Հայ ողի, արյան ծովերի մեջ ջրդեղված պողպատ, բյուր կալծակ է օրը հարվածում քեզ և ինքը ընկնում հարվածված» (Հ, 323): 1917 թ. գրառումներից մեկն իր ասելիքով ու տրամադրությամբ, ասես, շարունակությունն է 1916 թ. «Սեպտեմբերի», ուր գրողը անդրադառնալով եվրոպայի՝ հայ ժողովրդի կյանքում կատարած դերին, մեղադրանքի խոսքեր է ուղղում նրա հասցեին: Սեփական տնտեսական և քաղաքական շահերին հետամուտ՝ եվրոպացիները կորցրել են մարդկային-բարոյական շահանքները, և այդ է պատճառը, որ հայ արյունոտ ջարդերը ոչ մի գայություն չհարուցեցին թուրքերի հանդեպ, նույնիսկ ջանացին օգտագործել այդ արյունը, «...դառնալ փաստաբան և պաշտպան թուրքերի համար, ստանալով նրանցից վարձ ու հատուց, կոնցեսիաներու նույնիսկ մեղադրեցին հայերին...» (Հ, 326): Հետաքրքիր է, որ այս գրառման շարունակության մեջ գրողը շեշտում է այն հանգամանքը, որ դա միայն իր կամ սերնդի կարծիքը չէ. «...ինչպես հայր Ալիշանն ինձ 1901 թ. ասաց. «Ավերված է եվրոպայի բարոյականը... բուրժուա-սոցիալիստ և թուրքի սանտիմը սիրող» (Հ, 315): Հայ ժողովրդի «արյան առուվաճառքով» գրավված եվրոպական մարդասիրության դեմ ծառայած Իսահակյանը ցատկաբար խոսքերով է բնութագրում նրա քաղաքականության իսկական դեմքը, առանց դիմակի. «...Որքան միամիտ էինք, չգիտեինք, որ եվրոպային պետք էին ջարդերը և՛ իր շուկան տարածելու, և՛ իր դիրքը ամրացնելու թուրքիայում... Մեր ջարդերի պատճառով եվրոպական պետությունները թուրքի ձեռքը սեղմելու մեծ փառք իրար ձեռքից էին խլում...» (Հ, 325): Դատապարտելով հանդերձ եվրոպային՝ գրողը միաժամանակ առանձին-առանձին բնում, վերլուծում, վեր է հանում այդ պետություններից յուրաքանչյուրի կատարած նողկալի դերը, բստմենլի արարքը՝ ներկայացնելով նրանց իրական դեմքն ու դործելակերպը և հատկապես մեղադրում Ֆրանսիային (1917 «Մայիսի 10»): Վոլտերի, Ժ.—Ժ. Ռուսսոյի՝ մարզու «ազատության», «եղբայրության» և «հավասարության» կարողախոսներով աշխարհին հայտնի երկիրը՝ Ֆրանսիան, իր շուկայական շահերի համար վաճառքի հանեց հայերի արևմտյան հատվածի վերջին մասունքը՝ սատար չկանգնելով Կիլիկիային: Ներքին շարագույժ մտավախությունը՝ թե երբ Կիլիկիան անցնի ֆրանսիացիների ձեռքը «...թուրքի անբարեկամությանից լավ չպիտի լինի...» (Հ, 316) իրականացած տեսնելով՝ գրող Իսահակյանը 1920 թ. փետրվարի 22-ին սրտի խոր ցավով արձանագրում է. «...Կիլիկիայում նորից ջարդեր՝ 7000 հալ... Կրկին ջարդում են հայերին... թուրքը շատ լավ գիտե եվրոպացիներին սպառնալիքների արժեքը» (Հ, 341): Չեռագրերից մեկում Իսահակյանը մեկնում-բացահայտում է նաև այդ սպառնալիքի արժեքը. «...Եվրոպան իրեն համար... հասուլթի աղբյուր է շինել հայ աղետը. սպառնում է թուրքին հայի անունով՝ որպեսզի փող-կաշառք ստանա թուրքերից և դործը թաղե. թուրքն էլ ի՞նչ է կորցնում. հայերին կոտորում է և հայից կողպատած փողը տալիս կաշառք, աղատվում»¹¹: Ի պաշտպանություն հայ ժողովրդի արդար դատի իրենց ձայնը բարձրացրած ժամանակի մարդասեր հատուկենտ մտածողների կողքին (Ֆ. Նանսեն, Ժ. Ժորես, Կ. Լիբկնեխտ) աշխարհի հղորները իրենց օգոտապաշտ ու նյութամոլ դավանանքին էին հետամուտ. «...Լորդ Կրզոն»¹²

10 Գ. Ն մ դ Ն. Կյանքն ու գործունեությունը, նշխարներ, վկայություններ. Լուս Անեբես, 1989, էջ 29:

11 ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, № 148—II:

12 Գրողի անտիպենդում գտնում ենք «Լորդ Կրզոն իր խղճի հետ (նյութեր, շարադրանքներ)» գրառումը. «Երբ Կրզոն տեսնում էր ջարդերը, շոյում էր ձեռքերը ասելով. այո՛, բստմենլու է, բայց հայ կանայք պիտի լիվին, որ անզիպացի կինը կուշտ ապրի՝ պոռնիկ չդառնալու ամար» (ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, № 474—II):

հայտնեց... թե Անգլիան... իրավունք չունի ազգային գումարներ ծախսելու հայերի համար... իսկ նախարար Չեմբերլեն<ն> ասում է, թե Անգլիոն վարչապետը կամ արտաքին գործերի նախարարը թեև խոստում է տվել հայերի ազատագրման, բայց դա չի նշանակում թե պետությունը հանձնառություն ունի...» (2, 352): Անդրադառնալով 1915—1920 թթ. հայ արյունոտ կյանքին, Անտանտից ակնկալած սպասելիքներին՝ Իսահակյանը արձանագրում է. հայերը միամտաբար հավատացին Եվրոպայի «մարդասիրության» ու աջակցությանը, վստահ, որ իրենց արդարացի պայքարում վերջինս աջակցելու է իրենց: Այսօրինակ տրամաբանությամբ էլ օրագրի հեղինակը շարունակում է. «Մեզնից հիմա օգուտ չունեն. ունեին, երբ նեղն էին. պատերազմ կար, խոստումների շրջան էր, որ կռվեին հայերը, որ ջարդվեին... իսկ հենց որ պատերազմը վերջացավ՝ հիմա շահը. մեզնից ի՞նչ շահ... բանդված երկիր, ավեր, սով, ջարդված, մերկ ժողովուրդ... իսկ թուրքը, քուրդը, թաթարը հայերին կողոպտել են, ուրեմն նրանց հետ բարեկամանալ՝ օգտվելու համար. հապա հայե՞րը... Պետք է նրանց օգնեն, հաց տան, փող տան, հագուստ տան... Քուրդը սպանում է իր երախտավորներին՝ ազատվելու համար, իսկ Եվրոպացին ինչու՞ է բարձր ջրղի մոռալից...» (2, 341): Հեղինակը հավասարաթյան նշան է դնում քուրդ մահմեդականի բարբարոսության ու Եվրոպացու բարոյական անկման միջև: 1920-ական թթ. սկսած և հատկապես Կիլիկիայի քաղաքական դժնի ճակատագրում «չամառանալով»՝ «Հիշատակարանի» հեղինակն անընդմեջ անդրադառնում է Ֆրանսիայի՝ հայերի քաղաքական ճակատագրում խաղացած երկդիմի, ստոր գերին: Եվրոպական երկրներից հատկապես Ֆրանսիային է նա անարդում, քանի որ Իսահակյան մտածողին մտահոգում, զբաղեցնում է հետևյալ հանգամանքը. ինչպե՞ս կարող էր ազատություն, եղբայրության կոչերի հեղինակ, պանծալի հեղափոխության բնօրրանը այդպիսի կտրուկ և արմատական բեկում ապրել. «Լի՛րբ Ֆրանսիա, գնաց զինաթիփ արեց հայերին, կամավորներին և զինեց քուրդներին, թյուրքերին — գնաց Մուստաֆա Քեմալին այցի և սիրաշահեց... Կիլիկիան գրավեց և թույլ է տալիս սարսափելի ջարդեր...» (2, 342): Ֆրանսիան շուկայական շահը վեր դասեց իր դավանած ազատամիտ գաղափարախոսությունից: Այս ատուժով բացառություն է Իտալիան. նա ինչն էլ չկարողացավ պաշտպան կանգնել իր շահերին և կամա-ակամա դարձավ հզոր երկրների կամակատար: Այս հանգամանքից ապշած ու զայրացած՝ Իսահակյանը օրագրում արձանագրում է. «Գարիբալդիի հայրենիքը մեզ դավաճանեց» (2, 343): Նմանօրինակ մտայնության արդյունք են գրողի քսանական թվականների առաջին կեսի օրագրային գրառումները, որոնցում հեղինակը հատկապես ծանր է վերապրում Ֆրանսիայի, Իտալիայի քաղաքական կեցվածքը հայ ժողովրդի սպառնալից-ազատագրական սպառնալի հարցում: «Հիշատակարանի» համաստիացմամբ, հեղինակը ընդհանրապես կասկածի տակ է առնում Եվրոպայի՝ որպես քաղաքակրթության առաջամարտիկ լինելու փաստը. նրա առաջ կանգնած էր միայն մարդասպան Եվրոպան, և հատկանշական է, որ նույն ձեռքով է նրան ընդթափանցել և Անրի Բարբյուսը:

Գրողի ձեռագրերում տեղ են գտել նաև հայ դասի պաշտպան, Եվրոպական հատուկներ մտավորականների տեսլիները. որոգր խոր երախտագիտության զգացմունք է տածել նրանց հանդեպ:

Իսահակյանն այնուհետև անդրադառնում է հայ կյանքում անզլիացիների և ամերիկացիների խողողած դերին՝ նրանց անվանելով «մարդուկեր»: Որագրում Իսահակյանի աշտորությունից չի վրիպում Միացյալ Նահանգներին իշխանության վարած քաղաքականությունը: Թվում է, թե Ամերիկյան հայապաշտպան գործ է անում, քանի որ որբանոցներ է բացում, սակայն գրողը ճիշտ է մեկնաբանում ու դեհաստում այդ արարքի զրգալատճառը՝ Լժան աշխատում է հավաքագրում երկրի համար. «...նույնիսկ Ամերիկյան շահագործից մեր զոհերի մարտիրոսացումը իր բուրժուական տղաժող նպատակը սրբագործելու համար» (2, 343):

Արևելքում իր ազդեցությունը ուղղորդելով ընդարձակելու նպատակով Բոսֆորից դեպի Պարսից ծոց երկաթուղային շինարարությունը զբաղված Գերմանիան իր տնտեսական շահերը վտանգի չենթարկելու նպատակով օգնում, դինում էր թուրքերին հայերի ցեղասպանության գործում, խրախուսելով նաև պանթուրիզմի ծրագիրը։ Գերմանիան դեմ էր արևմտահայության ազատագրմանը և ժողովրդի առական կողմնորոշմանը։ Նրան ձեռնադրել էր Մերձավոր Արևելքում ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Անգլիայի կամ Ֆրանսիայի դիրքերի ուժեղացումը։ Հայաստանը խոչընդոտում էր Գերմանիայի Արևելյան ծրագրի ծավալմանն ու իրագործմանը և թուրքիայի պանթուրիզմի ծրագրին։ Գերմանիան շահագրգռված էր պանթուրիզմի ծրագրով. քանի որ վերջինս ուղղված էր հայ ժողովրդի դեմ։ Եվ երկու թուրքերի հարցը «լուծեցին»՝ արևմտահայ բնիկ ազգաբնակչության բնաջնջումով։ Պատահական չէ, որ պրոդի դեռևս 1917 թ. օգոստոսյան գրառումը ավարտող տուրքերը նգովք են՝ ուղղված աշխարհի ոճրագործներին. «...Գազան Եվրոպա, նդովում են քեզ, հավիտյան խարանում ոճրագործ ճակատդ...» (2, 326), «...Քաղաքակրթությունը, քրիստոնեությունը շուգեց աշատել... նգովք մարդկությունը, ազգերին և ամենից շատ եվրոպացիներին...»¹³։ Գրողի այս խորհրդածությունն ու կատարելությունն ուղղված զրոյի հայացքն է։ Ասպես՝ «մարդու մոտ չկա ոչինչ առավել վեհ, քան մարդասիրական սգին»¹⁴. — գրում է Հերգերը, համոզված, որ մարդկության գոյության նպատակը մարդասիրությունն է։ Եվ եթե Սիամանթոն 1915 թ. նախորդող հալոց սպամությունն արյունոտ տարիներին, մարդկության ոճրագործ օրենքների դեմ ըմբոստացած, գրում էր. «Ո՛վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքեմ քու ճակատիդ»¹⁵, ապա Իսահակյանը ոչ միայն իր ժողովրդի նախահորի, այլև փոքր ազգերի հանդեպ աշխարհի հզորների նյութած դավերին ակնատեսն (հույներ, քրդեր), 1918 թ. («Ապրիլի 23») վավերացնում է. «Թո՛ւր ու մո՛ւր մարդկության խղճին...» (2, 334)։ Ընդլվելով նմանօրինակ քաղաքակրթության դեմ՝ գրողը մերժում է մարդասեր կոչված նրանց այդ կեղծ մարքագիծը. «Ահա եվրոպական քաղաքակրթությունը՝ շնական, բորենիական, վայրենի, բարբարոս մի քաղաքակրթություն... Անհնար է որակել...» (2, 346)։ Այս տրամադրության անմիջական ազդեցությամբ էլ շաղախված է «Դիր կրծքիդ արտում...» բանաստեղծությունը.

Աշխարհի բոլոր
Գայլն ու բորենին
Տե՛ս, նախանձում են
Մեր դանիճներին... (2b, 191) :

Իսահակյանի համար հատկապես անհանդուրժելի ու աններելի էր եվրոպական սոցիալիստների վարած քաղաքականությունը։ Նրանք իրենց ներկայացնում են որպես արդարամիտ ու ազատատենչ քաղաքական գործիչներ, սակայն հեղինակը ներքին խորաթափանցությամբ բացահայտում է նրանց խոսքի և գործի հակասությունը. «Այլ սոցիալիստներ... նրանք էլ կաշառված են ու լկտի, նրանք միշտ պաշտպանում են իրենց բուրժուազային արտաքին շահերը, գաղութային պոլիտիկա... նրանք ուզում են որ ուռիչ ազգեր՝ մանր, ճնշված, կողոպտվեն... Անգլիացի սոցիալիստը չի ուզենա գրկվել Հնդկաստանը շահագործելուց. այդ է պատճառը... որ իրենց ղեկավորները հեռացան Հայաստանից և Կիլիկիայից. հոգ չէ, թե հայերը կջարդվեն».

13 ԳԱԹ, Իսահակյանի արխիվ. № 765—766—II, էջ 4.
14 Иоганн Готфрид Гердер. Идея к философии истории человечества. М., 1977, с. 428.
15 Ս ի ր մ ա ն թ ու. Ընտիր երկեր. Իրևան, 1957, էջ 154:

բայց չեն պահանջում, որ նույն զինվորները հեռանան Ալժիրից, Թունիսից. Հնդկաստանից, Միջագետքից...» (2, 348—349): Իսկ հայկական նախճիրի մասին ֆրանսիացի սոցիալիստները գրել են. «...Հայերը ձանձրացրին մարդկությունը: Թող իմանան ընդմիջտ, որ հայկական հարց գոյություն չունի. թող հանգիստ թողնեն մեզ: ...նույնը և Անգլիան և ամբողջ Եվրոպան անխրտիք, մեծ ու փոքր և վերջապես Ամերիկան...»¹⁶: Այս գրառումներում Ավ. Իսահակյանին հաջողվել է բացառիկ խորաթափանցությամբ մեկնաբանել քաղաքական դիվանագիտության աշխարհը, նրա ստոր, դիմակավոր էությունը. կաշառված են քաղաքական բոլոր հոսանքները, այդ թվում և մամուլը, որն իր ստահող լուրերով, փաստերի աղավաղված, անճիշտ մեկնություն-եզրակացություններով իշխող տերերի կամքն է կատարում՝ ապակողմնորոշելով աշխատավոր մարդկանց: Այս նույնը կրկնվեց նաև 1938 թ., երբ Արցախը ոտքի ելավ պայքարելու ազատության, իր մարդկային իրավունքների համար: Այս առումով էլ գոողի նկատառումները ևս խիստ արդիական են, ժամանակակից. «Իսկ մամուլը... Սա որ իր երկրների պես պոռնիկ է, վաճառված. ստանում է փող և արդարությունը, մարդկանությունները, իրավունքը ուրանում է... Սրիկա՝ աշխարհ, փողի աշխարհ... փողով կաշառված են և՛ թղթակից, և՛ սոցիալիստ... Եվ ժողովուրդը՝ անգիտակից, ծափահարում է...» (2, 341, 358):

Միյուտբում գործող քաղաքական սարքեր կուսակցություններին հարող հայ գործիչներին, հալ ժողովրդին ուղղված կտակն են Ավ. Իսահակյանի 1921 թ. դեկտեմբերի 21-ից դրված նամակները՝ ուղղված Վ. Ահարոնյանին, շարադրված ժամանակի քաղաքական կյանքի ողջախոհ, ճշմարիտ, իրական դեհատություններով և կողմնորոշումներով: Հայաստան երկրի պագապի մասին մտորումներ ծրարող գրողի այս դատողությունները յուրովի պատասխան են նաև այն հարցին, թե ինչու գրողը վերադարձավ հորհրդային Հայաստան. «...Մեզ մնում է ոռուր... վերջիվերջո ոռու և թուրք բախվելու են իրար, Անատոլիան գրավվելու է ոռուների կողմից ուշ կամ կանուխ... ֆրանկո-անգլիական նպատակն է մռուսումաններին կանգնեցնել ոռուների դեմ, ինչպես և ոռուների նպատակն է, բայց էություն մեջ թուրքը Եվրոպային համակիր է... Անգլիան և Ֆրանսիան հնարքներ են մտածում թուրքին հասցնել մինչև Բագու: Թուրք նրանց համար հաղար անգամ վտանգավոր է, քան իսլամը... Տեսնում ես, թե ի՞նչ է խորհում Եվրոպան. թուրքերով պատե՛նք ստեղծել ոռուի դեմ: Եվ եթե մեր ղեկավարները հասկանային այս՝ Ղարսը կորցրած չէին լինի և 6000 հայ հողի տակ դրած...»: Իսահակյանը ավելի, քան ուրիշները հակառակ է բոլշևիզմին, բայց «...պետք է մի modus գտնել իրար հետ ապրելու ի սեր հայության, և վերջապես այդ բռնությունը մեր ուժերից վեր է տապալելու: Թուսն է ստեղծել, ոռուր պիտի բանդե. մենք միայն խորամանկ գտնվենք...»¹⁷:

Հայոց ողբերգության պատճառներին անդրադառնալիս դրողը ոչ միայն մեղադրում է եվրոպական քրիստոնյա երկրներին, այլև, համարյա բոլոր դեպքերում, նշում Եվրոպայի երկրների հանդեպ նրանց տածած անվերապահ, անքննելի, միամիտ հավատը: Պատերազմի ժամանակ հայերին մեծ խոստումներ շուրջեցին. իսկ հալերն էլ հավատացին. «...Կարծում էին, թե աշխարհը իրենց պես է—գաղափարական, հավատարիմ, զոհարեցող...» (2, 355): Իր ժողովրդի անօրինակ դաժան ճակատագիրը պատմական կտրրվածքով քննելիս Իսահակյանը ժողովրդի գոյատևման կենսունակ կավանները անշուժ է նրա հոգևոր-բարոյական ու մտավոր ուժերի հզորությունը, անձնադոհ հաղթանասիրությունը, նրա «աշխատհաշեն ողուն»: Այս էլ վստահ համոզվածություններով հավաստում և Հովհ. Թումանյանը. «Զարմանալի է մեր

16 ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, № 25:

17 Ավ. Իսահակյանի նամակները Վ. Կավասարդյանին, Ռ. Գարբիյանին, Կ. Խաթանասյանին, Վ. Ահարոնյանին. Գահիրե, 1939, էջ 82, 97, 111:

ազգի կենսունակությունը»¹⁸։ Բազմաթիվ հնագույն ժողովուրդներ անհետացել են, մինչդեռ հայր շարունակ կարողացել է պայքարել և գոյատևել, քակարյան և մահվան՝ դարեր ի վեր երկարաձգվող մղձավանջը ի զորու չէ եղել հայի հոգույ խելու նրա տոկունությունը, ապրելու, հարատևելու ուժի գաղտնիքը։ Ժողովրդի գոյատևման ինքնավստահ հավատը որդեգրած բանաստեղծն էլ «Մեր նախահայրերը» ստեղծագործության մեջ ազդարարում է իր երկրի հավերժության մասին։

Աշխարհն եզավ Հայաստան և պիտ մեա Հայաստան՝
Մինչև աբեր հանգչի և ցուրտ անյունը նրա
Չյունե համայն ազգերի հայրենիքների վրա...¹⁹։

ПАТРИОТ И ПОЛИТИК АВ. ИСААКЯН В «ДНЕВНИКАХ»

Доктор филол. наук МАРИ ЗАКАФЯН

Р е з ю м е

Размышления Ав. Исаакяна о грядущей политической ситуации Армении присутствуют в его «Дневниках» с первых же записей. Судьбы нации заботили его все последующие годы и десятилетия. Раздумья поэта касаются не только непосредственно осмысления и оценки политических событий в стране, но и исторического прошлого. Исаакян отвергает политические ожидания армян от Европы и обвиняет ее за неблагоприятную роль в армянской политической жизни.

¹⁸ Հ ո Վ Տ. Թ ու մ ա ն յ ա ն. Երկերի լիակատար ժողովածու. հ. 4, Երևան, 1951, էջ 33։

¹⁹ Ա Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկերի ժողովածու վեց հատորով. հ. 2, Երևան, 1974, էջ 18։